ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*18 հունիսի 2018թ. N 17*

# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին օրենքի" 12-րդ հոդվածի պահանջներով

***Իջևան համայնքի ավագանին որոշում է***

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը

1. Համայնքի ավագանու անդամ Վահե Ղալումյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին
2. Հաղորդում համայնքի 2018թ բյուջեի 1-ին եռամսյակի կատարման մասին
3. ,,Իջևանի պատմաերկրագիտական թանգարան,, ՀՈԱԿ –ի տնօրեն նշանակելու մասին
4. Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
5. Ազատամարտիկների հրապարակում երթևեկության կարգավորման գծանշումներ կատարելու և համապատասխան նշաններ տեղադրելու մասին
6. ,,Հայկական կարմիր խաչի ընկերություն,, հասարակական կազմակերպությանը անհատույց մշտական օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին
7. ՀՀ ԳՆ ,,Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն,, ՊՈԱԿ-ին անհատույց մշտական օգտագործման իրավունքով հողամաս տրամադրելու մասին
8. ,,ՍՕՍ մանկական գյուղեր,, Հայկական բարեգործական հիմնադրամին անհատույց մշտական օգտագործման իրավունքով հողամաս տրամադրելու մասին
9. Իջևան համայնքի վարչական տարածքում գտնվող բնակելի կառուցապատման հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
10. Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին որոշելու մասին
11. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխությանը համաձայնություն տալու մասին
12. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխությանը հավանություն տալու մասին
13. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխությանը համաձայնություն տալու մասին
14. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխությանը համաձայնություն տալու մասին
15. Քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնակամ շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՁԻԲՈՒԽՉՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ |
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Իսկականի հետ ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

## 1.ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

## ՀԱՂՈՐԴՈՒՄ

Իջևան համայնքի 2018թ. տարեկան բյուջեն առ 01.04.18թ դրությամբ եկամուտների մասով կատարվել է 23.6%, կամ նախատեսված տարեկան 569926.5 հազար դրամի դիմաց փաստացին կազմել է 134232.5 հազար դրամ:

Այդ նույն ժամանակաշրջանում սեփական եկամուտները կատարվել են 21.3% /նախատեսված 181345.0 հազար դիմաց փաստացին կազմել է38597.0 հազար դրամ/:

Հարկային եկամուտները կատարվել են 21.0%, այդ թվում հողի հարկը՝ 15.1% գույքահարկը՝ 21.3%:

Ընդամենը տուրքերը կատարվել են 21.1%, այդ թվում պետական տուրքերը՝ 19.2%, տեղական տուրքերը՝ 22.0%:

Ընդամենը այլ տեղական վճարները կատարվել են 22.1%:

Համայնքային գույքի օտարման առաջադրանքը կատարվել է 28.8%:

Ընդամենը ծախսումները կատարվել են 23.1%, այդ թվում քաղաքապետարանի պահպանման ծախսերը կատարվել են 25.8%, կրթության բնագավառի ծախսերը կատարվել են 24.3%, մշակույթի և սպորտի բնագավառում 26.5.0%, սան. մաքրման և կոմունալ ծախսերը կատարվել են 23.1%:

**Արձանագրություն** *18 հունիսի 2018թ.*

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Իջևան համայնքի ավագանու անդամ Վահե Ղալումյանը զբաղեցնում է ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն, ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և նույն հոդվածի 2-րդ մասով, Իջևան համայնքի ավագանու անդամ Վահե Ղալումյանի լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարեցված, սկսած ս/թ հունիսի 18-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Բնօրինակի հետ ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## Իջևան քաղաքային համայնքի ավագանի
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*18 հունիսի 2018թ. N 18*

### 3. ,,ԻՋԵՎԱՆԻ ՊԱՏՄԱԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ,, ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ավագանին նշում է, որ համայնքի ղեկավարի 27.04.2016թ թիվ 45 կարգադրությամբ 'Իջևանի պատմաերկրագիտական թանգարան' ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար է նշանակվել Նազելի Ղալումյանը:

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 16-րդ կետով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է***

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ 'Իջևանի պատմաերկրագիտական թանգարան' ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակել Նազելի Ղալումյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ |
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Իսկականի հետ ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## Իջևան քաղաքային համայնքի ավագանի
## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*18 հունիսի 2018թ. N 19Ա*

**4.ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համայնքի ավագանին նշում է, որ համայնքի տարածքում գործող համայնքային ենթակայության 11 հիմնարկներում գնումների գործընթացի կազմակերպումը բարելավելու համար անհրաժեշտություն է առաջացել համայնքապետարանի աշխատակազմում կատարել փոփոխություն՝ առաջատար մասնագետի մեկ հաստիքը կրճատել և փոխարենը ավելացնել գլխավոր մասնագետի մեկ հաստիք:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն 1-2 հավելվածներ:

2. Ուժը կորցրած ճանաչել Իջևանի քաղաքային համայնքի ավագանու 22 դեկտեմբերի 2017թ. «Իջևանի համայնքապետարանի, ենթակա բյուջետային հիմնարկների ու ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակների և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին» թիվ 66Ա որոշումը՝ համայնքապետարանի մասով:

3. Իջևան համայնքի ղեկավարին՝ Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ |
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Նախագիծը ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

# ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատակազմը կազմված է 6 բաժիններից`

## Առանձնացված ստորաբաժանում

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Իջևանի տարածքային բաժին

## Կառուցվածքային ստորաբաժանումներ

2. Ֆինանսական բաժին
3. Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին
4. Առևտրի, տրանսպորտի, սպասարկումների և կապի բաժին
5. Ներքին աուդիտի բաժին
6. Կրթության, մշակույթի և սպորտի բաժին

## ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2018թ

Աշխատակիցների թվաքանակը՝ 46

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ | | | |
| 1. | Համայնքի ղեկավար | 1 | 440000 |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 355000 |
| 3 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 300000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | |
| 4 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 330000 |
| *Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում* | | | |
| *ՔԿԱԳ Իջևանի տարածքային բաժին* | | | |
| 5 | Բաժնի պետ | 1 | 256600 |
| 6 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 133600 |
| *Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ* | | | |
| *Ֆինանսական բաժին* | | | |
| 7 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 8 | Գլխավոր մասնագետ | 1 | 158227 |
| 9 | Առաջատար մասնագետ | 2 | 124775 |
| 10 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 100680 |
| *Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին* | | | |
| 11 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 12 | Գլխավոր մասնագետ –ճարտարապետ | 1 | 158227 |
| 13 | Առաջատար մասնագետ | 2 | 124775 |
| 14 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 100680 |
| *Աշխատակազմի մասնագետներ* | | | |
| 15 | Գլխավոր մասնագետ | 7 | 158227 |
| 16 | Առաջատար մասնագետ | 2 | 124775 |
| 17 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 100680 |
| *Առևտրի, տրանսպորտի, սպասարկումների և կապի բաժին* | | | |
| 18 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 19 | Գլխավոր մասնագետ | 1 | 158227 |
| 20 | Առաջատար մասնագետ | 1 | 124775 |
| 21 | 2-րդ կարգի մասնագետ | 2 | 83358 |
| *Կրթության, մշակույթի և սպորտի բաժին* | | | |
| 22 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 23 | Գլխավոր մասնագետ | 1 | 158227 |
| 24 | Առաջատար մասնագետ | 1 | 124775 |
| 25 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 100680 |
| *Ներքին աուդիտի բաժին* | | | |
| 26 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 27 | Առաջատար մասնագետ | 1 | 124775 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ | | | |
| 28 | Իրավաբան | 1 | 150000 |
| 29 | Քարտուղարուհի | 1 | 115000 |
| 30 | Խմբագիր | 1 | 92550 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | |
| 31 | Վարորդ | 1 | 255000 |
| 32 | Պարետ | 0,5 | 72751 |
| 33 | Էլեկտրիկ | 1 | 72751 |
| | Ընդամենը | 45,5 | 7707668 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## Իջևան քաղաքային համայնքի ավագանի
## ՈՐՈՇՈՒՄ

*18 հունիսի 2018թ. N 20*

### 5. ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԳԾԱՆՇՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆՇԱՆՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ անհրաժեշտություն է առաջացել Ազատամարտիկների հրապարակում կատարել երթևեկությունը կարգավորող գծանշումներ և տեղադրել համապատասխան նշաններ:

Հաշվի առնելով վերոհիշյալը .

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1.Տալ հավանություն համայնքապետի առաջարկությանը՝ Ազատամարտիկների հրապարակում կատարել երթևեկությունը կարգավորող գծանշումներ և տեղադրել համապատասխան նշաններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ |
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Իսկականի հետ ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## Իջևան քաղաքային համայնքի ավագանի
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*18 հունիսի 2018թ. N 21*

### 6.,,ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ,, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևանի քաղաքապետարան է դիմել ,,Հայկական Կարմիր խաչի ընկերություն,, հասարակական կազմակերպությունը, Իջևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 14 հասցեում գտնվող գրադարանի շենքից տարածք տրամադրելու խնդրանքով:

Իջևանի քաղաքապետը Իջևան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել վերոհիշյալ դիմումը և առաջարկել, Իջևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 14 հասցեում գտնվող գրադարանի շենքից 77.68քմ մակերեսով տարածք անհատույց մշտական օգտագործման իրավունքով տրամադրել ,,Հայկական Կարմիր խաչի ընկերություն,, հասարակական կազմակերպությունը:

Իջևան համայնքի ավագանին քննարկելով վերը նշվածը և ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18 հոդվածի 21-րդ պահանջներով՝

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

Տալ հավանություն Իջևանի քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 14 հասցեում գտնվող գրադարանի շենքից 77.68քմ մակերեսով տարածք անհատույց մշտական օգտագործման իրավունքով տրամադրել ,,Հայկական Կարմիր խաչի ընկերություն,, հասարակական կազմակերպությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ |
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Իսկականի հետ ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

*18 հունիսի 2018թ. N 22*

# 7.ՀՀ ԳՆ ,,ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ,, ՊՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևանի քաղաքապետարան է դիմել ՀՀ ԳՆ ,,Հանրապետական անասնաբուժասանիտարական եվ բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն,, ՊՈԱԿ-ը, Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցի թիվ 58 հասցեում գտնվող և իր հաշվեկշռում հաշվառված անշարժ գույքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.306հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետությանը տրամադրելու խնդրանքով:

Իջևանի քաղաքապետը Իջևան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել վերոհիշյալ դիմումը և առաջարկել, Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցի թիվ 58 հասցեում գտնվող և ՀՀ ԳՆ ,,Հանրապետական անասնաբուժասանիտարական եվ բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն,, ՊՈԱԿ-ի հաշվեկշռում հաշվառված անշարժ գույքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.306հա մակերեսով հողամասը անհատույց մշտական օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետությանը:

Իջևան համայնքի ավագանին քննարկելով վերը նշվածը և ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18 հոդվածի 21-րդ պահանջներով՝

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

Տալ հավանություն Իջևանի քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցի թիվ 58 հասցեում գտնվող և ՀՀ ԳՆ ,,Հանրապետական անասնաբուժասանիտարական եվ բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն,, ՊՈԱԿ-ի հաշվեկշռում հաշվառված անշարժ գույքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.306հա մակերեսով հողամասը անհատույց մշտական օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ |
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Պատճենը հիմն ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*18 հունիսի 2018թ. N 23*

**8.,,ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ,, ՀԲՀ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Իջևանի քաղաքապետարան է դիմել ,,ՍՕՍ մանկական գյուղեր,, ՀԲՀ-ն, ,,Իջևան,, մասնաճյուղում, բարեգործական հիմունքներով արևային էներգիայի կայան, ինչպես նաև արևային ջրատաքացուցիչներ և LED լուսավորման համակարգեր տեղադրելու համար հողամաս տրամադրելու խնդրանքով:

Իջևանի քաղաքապետը Իջևան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել վերոհիշյալ դիմումը և առաջարկել, Իջևան քաղաքի Ս. Օհանյան փողոցի 1-ին նրբ. թիվ24/2 հասցեում գտնվող 0.1027հա մակերեսով հողամասը անհատույց մշտական օգտագործման իրավունքով տրամադրել ,,ՍՕՍ մանկական գյուղեր,, ՀԲՀ-ին:

Իջևան համայնքի ավագանին քննարկելով վերը նշվածը և ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18 հոդվածի 21-րդ պահանջներով՝

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

Տալ հավանություն Իջևանի քաղաքապետի առաջարկությանը՝ Ս. Օհանյան փողոցի 1-ին նրբ. թիվ24/2 հասցեում գտնվող 0.1027հա մակերեսով հողամասը անհատույց մշտական օգտագործման իրավունքով տրամադրել ,,ՍՕՍ մանկական գյուղեր,, ՀԲՀ-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ |
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Իսկականի հետ ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*18 հունիսի 2018թ. N 24*

**9.ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցում գտնվող 447.51քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0001-005/, 15.74քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0001-0045/, 63.98քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0001-009/ հողամասերը կադաստրային քարտեզում արտացոլված են, որպես ֆիզիկական անձանց պատկանող բնակելի կառուցապատման հողամաս, սակայն որևէ անձի անվամբ հաշվառված չեն և դրանց նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք գրանցված չեն:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1.Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցում գտնվող 447.51քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0001-005/, 15.74քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0001-0045/, 63.98քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0001-009/ հողամասերի նկատմամբ Իջևան համայնքի սեփականության իրավունքը գրանցելուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ |
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Քաղվածքը ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար՝ Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
**ՈՐՈՇՈՒՄ**
*18 հունիսի 2018թ. N 25*

**10.ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն է ներկայացվել Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող, Երիտասարդական թիվ61/3 հասցեում գտնվող 78.4քմ մակերես հողամասով /նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ պահեստարանների/ 78.4քմ արտաքին մակերեսով / ներքին մակերեսը կազմում է 63.2քմ/ պահեստն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին որոշելու մասին:

Իջևան համայնքի ավագանին քննարկելով վերը նշվածը և ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18 հոդվածի 21-րդ պահանջներով՝

***Իջևան համայնքի ավագանին որոշում է***

1. Տալ հավանություն, Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող, Երիտասարդական թիվ61/3 հասցեում գտնվող 78.4քմ մակերես հողամասով /նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ պահեստարանների/ 78.4քմ արտաքին մակերեսով / ներքին մակերեսը կազմում է 63.2քմ/ պահեստն աճուրդային կարգով օտարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հողամասի մեկնարկային գին սահմանելով 330000 դրամ, շինության մեկնարկային գին սահմանելով 90000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ |
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Իսկականի հետ ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
*18 հունիսի 2018թ. N 26*

ՆԱԽԱԳԻԾ

**11.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

08.11.2005թ ՀՀ Տավուշի մարզի Գածաքար համայնքի ղեկավարի որոշմամբ ,,Ղ-Տելեկոմ,, /այժմ ,,ՎիվաՍել-ՄՏՍ,,/ ՓԲԸ-ին վարձակալության իրավունքով /50 տարի ժամկետով/ հատկացվել է 200.0քմ հողատածք՝ բջջային հիմնական կայանի կառուցման նպատակով: Կնքվել է հողամասի վարձակալության պայմանագիր, որը ստացել իրավունքի պետական գրանցում /վկայական 00991023/: Հողամասում բջջային կայանը կառուցված է: ՀՀ կառավարության 2005թ. հոկտեմբերի 6-ի N 2417-Ն որոշմամբ նշված հողատարածքը փոխանցվել է Իջևան համայնքին և ընդգրկված է 11-001-00229-0003-01 ծածկագրով հողամասի մեջ, որը համարվում է անտառային նպատակային նշանակության հողամաս: 2006թ նոյեմբերի 30-ի թիվ 1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի գլխավոր հատակագծում նույնպես հողամասը նշված է նույն նպատակային նշանակության հողամաս:

Հետևաբար անհրաժեշտություն է առաջացել կատարել հողամասի նպատակային և գործառնական նշանակության համապատասխան փոփոխություն՝ դրա օգտագործմանը համապատասխան, Իջևան համայնքի և ,,ՎիվաՍել-ՄՏՍ,, ՓԲԸ-ի միջև վարձակալության իրավունքի պայմանագրի վերակնքման նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը և հողամասի նպատակային նշանակությունը, որպես էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր, իսկ գործառնական նշանակությունը, որպես կապի, փոխելու անհրաժեշտությունը, և ղեկավարի առաջարկությունը՝ ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասի, ,,Քաղաքաշինության մասին,, ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի, ՀՀ 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 11-րդ կետի պահանջներով, ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստի քննարկմանը ներկայացնելու նպատակով, համայնքի ավագանին.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է***

1. Տալ համաձայնություն ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխության նախագծին /գլխավոր հատակագիծ/.

ՀՀ Տավուշի մարզի Գածաքար համայնքի կողմից 08.11.5005թ ,,Ղ-Տելեկոմ,, /այժմ ,,ՎիվաՍել-ՄՏՍ,,/ ՓԲԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրված /վկայական 00991023/, իսկ այժմ Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող 11-001-00229-0003-01 ծածկագրով հողամասի մի մաս համարվող և բջջային հիմնական կայանով զբաղեցված, 200.0քմ մակերեսով անտառային նպատակային նշանակության հողամասի նպատային նշանակությունը, որպես էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կազմի մեջ փոխադրելուն, իսկ գործառնական նշանակությունը, որպես կապի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ |
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Իսկականի հետ ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար** **Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
**ՈՐՈՇՈՒՄ**
*18 հունիսի 2018թ. N 27*

ՆԱԽԱԳԻԾ

12.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 11-001-0273-0001 ծածկագրով հողամասի մաս համարվող 2.5 հա մակերեսով հողամասը /Իջևանի Սպիտակ լիճ ջրամբարից հարավային հատվածում/ ՀՀ կառավարության 06.10.2005թ թիվ 2417-Ն որոշմամբ նշված է պետական սեփականություն հանդիսացող անտառային հողեր: ՀՀ կառավարության 2006թ նոյեմբերի 30-ի թիվ 1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի գլխավոր հատակագծում նույնպես հողամասը նշված է որպես անտառային հողեր: Ելնելով համայնքի շահերից, նշված հողամասի նպատակային նշանակությունը նպատակահարմար է անտառայինից փոխադրել գյուղատնտեսական նպատակային և վարելահող գործառնական նշանակության հողամաս, և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասի, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի, ՀՀ 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13 և 62 կետերի պահանջներով՝ ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստում քննարկելու համար, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը,

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Տալ հավանություն ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխության նախագծին /գլխավոր հատակագիծ/՝

Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող 2.5 հա մակերեսով հողամասը /11-001-0273-0001 ծածկագրով հողամասի մի մաս/ պետական սեփականություն հանդիսացող անտառային հողամասերի կազմից հանելու և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի կազմի մեջ փոխադրելուն, գործառնական նշանակությունը՝ վարելահող:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ |
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Իսկականի հետ ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
**ՈՐՈՇՈՒՄ**

*18 հունիսի 2018թ. N 28*

**13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից՝ Իջևան քաղաքի Աբովյան փողոցի 10 հասցեի շինությանը կից, բանկի երկրորդ և երրորդ հարկերի սպասարկման նպատակով կառուցված աստիճանավանդակի մասը ինքնակամ կերպով կառուցվել է համայնքային սեփականություն համարվող 6.09քմ մակերեսով բնակավայրերի նպատակային և ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակության հողամասի վրա /11-001-0124-0001-01 ծածկագիրով հողամասի մի մաս/: ՀՀ կառավարության 2006թ նոյեմբերի 30-ի թիվ 1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի գլխավոր հատակագծում նույնպես հողամասը նշված է նույն նպատակային և գործառնական նշանակության հողամաս: Ինքնակամ կառուցված աստիճանավանդակի մի մասի օրինականացման գործառույթների իրականացման նպատակով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի պահանջներով, Իջևան համայնքը դիմել է ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտե՝ նշված բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը ընդհանուր օգտագործման հողերից հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխելու համար, ինչը չի առարկվել վերջինիս կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեի 05.06.2018թ N06/11.2/2610-18 գրությունը ու ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասի, „Քաղաքաշինության մասին„ ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է***

1. Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի (բնակավայրերի) գլխավոր հատակագծի, Իջևան քաղաքի Աբովյան փողոցի 10 հասցեի շինությանը կից, աստիճանավանդակի մի մասով զբաղեցված, բնակավայրերի նպատակային նշանակության 0.000609 հա /6.09քմ/ մակերեսով հողամասի /11-001-0124-0001-01 ծածկագրով հողամասի մի մաս/ գործառնական նշանակությունը ընդհանուր օգտագործման հողերից հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոխադրելուն:
2. Հողամասի վրա ինքնակամ կառուցված աստիճանավանդակի հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
3. „Քաղաքաշինության մասին„ ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի 30-րդ մասով սահմանված կարգով նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1720-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող հետևանքները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ |
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ԱՐՏՈՒՐ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Իսկականի հետ ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
**ՈՐՈՇՈՒՄ**
*18 հունիսի 2018թ. N 29*

ՆԱԽԱԳԻԾ

14.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 11-001-0172-0001 ծածկագրով հողամասի մաս համարվող 0.07367 հա մակերեսով հողամասը ՀՀ կառավարության 06.10.2005թ թիվ 2417-Ն որոշմամբ Իջևան համայնքին է փոխանցվել որպես հատուկ պահպանվող հողեր նպատակաային նշանակության, գործառնական նշանակությունը՝ պատմական և մշակութային հողեր, որպես „Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածների,, հուշարձանի տարածք: ՀՀ կառավարության 2006թ նոյեմբերի 30-ի թիվ 1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի գլխավոր հատակագծում նույնպես հողամասը նշված է որպես նույն նպատակային և գործառնական նշանակության հողամաս: Հողամասը գտնվում է հուշարձանի 0.88հա մակերեսով տարածքի հարավային հատվածում՝ հուշարձանից մոտ 65մ հեռավորությամբ: Առկա է նաև քարտեզի սխալ, որը ենթակա է ուղղման: Դեռևս 1990-ական թվականներին նշված հողամասը հատկացվել է զոհված ազատամարտիկի ընտանիքին անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով /հողամասում արդեն առկա է կիսակառույց շինություն/, իսկ փաստաթղթային ձևակերպումները ձգձգվել են հողամասի նպատակային նշանակության անհամապատասխանության պատճառով: Նշված հողամասը բնակավայրերի նպատակային և գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման փոփոխվելու դեպքում՝ կբավարարվի զոհված ազատամարտիկի ընտանիքի, մասնավորապես Արփինե Խոջումյանի խնդրանքը: Հաշվի առնելով և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասի, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի, ՀՀ 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13 և 62 կետերի պահանջներով՝ ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստում քննարկելու համար, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ հավանություն ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխության նախագծին /գլխավոր հատակագիծ/՝

Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող 0.07367 հա մակերեսով հողամասը /11-001-0172-0001 ծածկագրով հողամասի մի մաս/ համայնքային սեփականություն հանդիսացող հատուկ պահպանվող հողեր նպատակաային նշանակության, գործառնական նշանակությունը՝ պատմական և մշակութային հողամասերի կազմից հանելու և բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերի կազմի մեջ փոխադրելուն, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ |
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Իսկականի հետ ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար** **...ԹԱՆԱՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
**ՈՐՈՇՈՒՄ**

*18 հունիսի 2018թ. N 30*

**15.ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով, օրենքով սահմանված կարգով՝ աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին:

Ղեկավարվելով,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետի և ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1.Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով՝ աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը համաձայն աղյուսակի.

| հհ | Նպատակը | Հասցե | Մակերեսը/քմ |
|---|---|---|---|
| 1 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ. | 1136.1 |
| 2 | Հասարակական կառուցապատում /ինք. սատիճ/ | Աբովյան փ. | 12.18 |
| 3 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 400.0 |
| 4 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 970.0 |
| 5 | Ընդհանուր օգտագործում | Ս. Օհանյան փ. | 42.3 |
| 6 | Արդյուն., ընդերքօգտ. և այլ արտադ. Նշանակության | Ս. Օհանյան փ. | 72.7 |
| 7 | Ընդհանուր օգտագործում | Գանիևի փ. | 7.07 |
| 8 | Ընդհանուր օգտագործում | Գանիևի փ. | 8.7 |
| 9 | Հասարակական կառուցապատում | Արցախյան փ. | 347.2 |
| 10 | Ընդհանուր օգտագործում | Երևանյան փ. | 1200.9 |
| 11 | Ընդհանուր օգտագործում | Երևանյան փ. | 161.0 |
| 12 | Ընդհանուր օգտագործում | Աբովյան փ. | 80.7 |
| 13 | Արդյուն., ընդերքօգտ. և այլ արտադ. Նշանակության | Արցախյան փ. | 100.0 |
| 14 | Ընդհանուր օգտագործում | Արցախյան փ. | 105.0 |
| 15 | Ոչ բնակելի տարածք | Արցախյան փ. | 35.36 |
| 16 | Ոչ բնակելի տարածք | Մետաղագործների փ. | 22.71 |
| 17 | Գյուղատնտեսական նշանակության | Ալանյան փ. | 669.0 |
| 18 | Գյուղատնտեսական նշանակության | Երևանյան փ. | 259.4 |
| 19 | Գյուղատնտեսական նշանակության | Երևանյան փ. | 421.0 |
| 20 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտ./ | Ազատամարտիկների փ. | 19.1հող/19.1շին |
| 21 | Բնակելի կառուցապատում /ինք. շին./ | Երիտասարդական փ. | 18.0հող/18.0շին |
| 22 | Բնակելի կառուցապատում /ինք. տնտ. շին./ | Մետաղագործների փ. | 292.2հող/10.44շին |
| 23 | Բնակելի կառուցապատում | Ս. Օհանյան փ. | 1398.9 |
| 24 | Ընդհանուր օգտագործում | Սպանդարյան փ. | 19.8 |
| 25 | Հասարակական կառուցապատում /ինք.սրճ/ | Երևանյան փ. | 195.8հող/65.58շին |
| 26 | Ընդհանուր օգտագործում | Երիտասարդական փ. | 6.4 |

| | | | |
|---|---|---|---|
| 27 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 106.5 |
| 28 | Բնակելի կառուցապատում /ինք. բնակ. տուն/ | Նալբանդյան փ. | 1000.0հող/302.11շին |
| 29 | Ընդհանուր օգտագործում | Մեհրաբյան փ. | 35,2 |

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՁԻԲՈՒԽՉՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**Իսկականի հետ ճիշտ է**

**Աշխատակազմի քարտուղար** **Բ.ԹԱՆԱՆՅԱՆ**